ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՔԱՐԵՂԵՆ ԷՋԸ

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հայաստանի միջնադարյան նշանավոր վանքերից մեկի՝ Սաղմոսավանքի Ս. Աստվածածին եկեղեցի-գրատան (կառուցված 1255 թ. իշխանաց իշխան Քուրդ Ա Վաչուտյանի և իշխանուհի Խորիշահ Մամիկոնյանի ջանքերով՝ ի հիշատակ իրենց վաղամեռիկ դուստր՝ Մամախաթունի) հարավային պատին դրսից բարձրուստ վեց տողով փորագրված է հետևյալ ընդարձակ արձանագրությունը.

⌈Կ⌉ԱՄԱԻՆ ԱՅ. ՄԵՔ՝ ԳԱԻԱՌՆԱ ԻՇԽԱՆՔՍ՝ ՊԼԱՂ ՈՅՆ ԹԼՈՒՅՄԼԱՅՆ ԱՂԷՆ, ՅԼՈՂՎԱՂԼԷՅՄՆ, ԴԱԻԻԹ ԵԻ ԴԻԼԱՆՃԻ, ՇՆՈՐՀԵՑԱՔ ԶՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԳԻՒՂՆ ԳԱԻԱՌ ՎԱԽՄ ՍԲ / ԱԶԻՆ ՅԼԱՂԼՈՂԲԼԱՅ Ի ՍԼԱՂՄԼՈՂՍԱՎԱՆՔ :Ի ԹՎԼԻՆՂ ՌԷ (1558): ՀՐԱՄԱՆԱԻ ՏՆ ՍՏԵՓԱՆՆՈՍ ԿԹՂԿԻ, ԵԻ ՄԻԱԲԱՆՔ ՍԲ ՈՒԽՏԻՍ ԽՈՍՏԱՑԱՆ Ի ՏԱՐԻՆ :Գ: (3) ՕՐ ՊԱՏԼԱՂԼԱԳԵՂԼ ԶՔԱՎՍ ՄԵՐ: ԵԹԷ ՈՔ Ի/ ՄԵՐՈՑ ԿԱՄ ՅՕՏԱՐԱՑ ՀԱՆԵԼ ԶԱՆԱ ԶՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ԳԻՒՂՆ ԳԱԻԱՌ Ի ՍԲ ԱԼՍՏՈՒԱԾԱՅԾԼՆՂԷՆ-ՅԼԱՂԼՈՂԲԼԱՅ, ԵՐԻՑ ՍԲ ԺԼՈՂՂԼՈՂՎԼՈՂՅՆ ՆԶՈՎԵԱԼ ԼԻՆԻ ԵԻ ՄԵՂԱՑՆ ՊԱՐ/ՏԱՊԱՆ ԳՏԱՆԻ, ԵԻ ՄԵՔ՝ ԳԱԻԱՌԱՆՍ ՔԱՀԱՆԱՅՔՍ, ⌈ՈՐ⌉ ՎԿԱՅ ԵՄՔ ԱՅՍ ՊԱՅՄԱՆԻՍ՝ ՏԷՐ ՄԱԹԷՈՍ ԵԻ ՏԷՐ ԿԻՐԱԿՈՍ, ԶԻ ՀԱՐՔ ՍՈՅԱ/ ԱՌԱՋ ՏՈՒԵԱԼ ԷԻՆ, ՍՈՔԱ ԿՐԿԼԻՆ ՇՆՈՐՀԵՑԻՆ ՍՐԴՈՎ: ԵՐԿՐՊԱԳԱԻՂՔ ՍԲ ԱԶԻՆ ՅԱԿՈԲԱՅ, ՅԻՇԵՑԵՔ ԶՀՈԳԻՍ ՄԵՐ Ի ԺԱՄ ՍՈՍ/ԿԱԼԻ ՍԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԵԻ ԴՈՒՔ ՅԻՇԵԱԼ ԼԻՋԻՔ ԱՌԱՋԻ ՔԻ, ⌊ԱՄԷՆ⌋: ՏԼԷՂՐ ԱԼՍՏՈՒԱՅԾ ՅԼԻՍՈՒՅՍ ՔԼՐԻՍՏՈՅՍ[1]:



[1] Մեր դաշտային օրագրից: Միջնադարում նվիրատվությունը կատարվում էր, որպես կանոն, եկեղեցուն, այլ ոչ մասունքին: Գյուղի ընծայատվությունը ս. Հակոբի Աջին նվիրատվություն էր Սաղմոսավանքի Ս. Աստվածածին եկեղեցուն, որտեղ պահվել է այդ սրբի մասունքը:

Առաջին հայացքից թվում է, թե նվիրատու իշխանները՝ պարոն Թուման աղան, Հովհաննեսը, Դավիթը և Դիլանչին, Արագածոտն կամ Ամբերդ գավառի, որ հիշյալ ժամանակ՝ XVI դ., կոչվում էր Չուխուր-Սաադի (Արարատյան երկիր) Կարբիի (Արագածոտնի) նահիայի (արաբ. ناحية - «գավառակ», «շրջան») իշխանավորներն են, որոնք իրենց հայրենի գյուղը նվիրաբերել են Սաղմոսավանքին:

Այն, որ Արագածոտնում եղել է Գավառ անունով բնակավայր, հավաստվում է Արուճի 867 թ. վիմագրով, որը հայտնում է երեք գյուղերի՝ Արուճի, Կոշի և Գավառի միջև ջրի համար ծագած կռվի մասին, ինչը հետագայում կարգավորվում է հայոց թագավոր Սմբատ Ա Բագրատունու (890-914) միջամտությամբ[2]:

Կ. Մաթևոսյանը չի բացառում, որ Գավառը ներկայիս Շամիրամ գյուղն է[3]: Արագածոտնի Գավառ գյուղի օգտին է խոսում կարծես նաև Սաղմոսավանքից նրա ոչ հեռու գտնվելու փաստը: Բայց կա մի հանգամանք, ինչը ստիպում է մերժել ներկայիս Շամիրամի տարբերակը: Բանն այն է, որ Սաղմոսավանքի նորահայտ արձանագրության չորրորդ տողում որպես նվիրատվության գործարքի վկաներ հանդես են գալիս երկու հոգի, որոնք իրենց կոչում են «Գաւառանս քահանայքս»: Ըստ այդմ, եթե խոսքը ամբողջ Կարբիի գավառի մասին է, ապա այդ դեպքում հոգևորական վկաների թիվը պետք է ավելի մեծ լիներ, և որոնք կներկայանային ոչ թե քահանաների, այլ եպիսկոպոսի մակարդակով: Բացի այդ, դժվար թե Գավառ փոքր գյուղը XVI դ. կեսին ունենար երկու քահանա: Հետևապես, պետք է Գավառ բնակավայրը փնտրել մեկ ուրիշ վայրում:

Գրիգոր Դարանաղցին (1576-1643), ով երիտասարդ տարիներին առժամանակ՝ 1600-1603 թթ., միաբանվել է Սաղմոսավանքի ս. ուխտի եղբայրությանը, գրում է. «Եւ յաւուր միոջ ելեալ գնացաք ի Գեղարքունի, մեզ երկու գիւղ թեմ կան անդ»[4]: Բայց, ափսոս, պատմագիրը չի հայտնում Գեղարքունիքում Սաղմոսավանքի թեմական այդ երկու գյուղերի անունները: Սիմեոն Երևանցին (1710-1780) Սաղմոսավանքի թեմի մեջ մտնող բնակավայրերի շարքում հիշատակում է Գեղարքունիքի Գավառագյուղը[5]: Այստեղից հետևում է, որ Սաղմոսավանքի նորահայտ վիմագրում հիշատակված նվիրատվության առարկան ըստ էության ներկայիս Գավառ քաղաքն է:

Այն հանգամանքը, որ Գավառն ունեցել է չորս իշխան, վկայում է նրա՝ XVI դ. կեսին մեծ բնակավայր եղած լինելու մասին: Նվիրատու ա-

---

[2] Տե՛ս վիմագիրը՝ **Կ. Մաթևոսյա**ն, Արուճ, Եր., 1987, էջ 60:

[3] Տե՛ս նույն տեղը:

[4] «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», Երուսաղէմ, 1915, էջ 502:

[5] Տե՛ս **Սիմեոն կաթողիկոս Երևանցի**, Ջամբռ, Եր., 2003, էջ 403:

ռաջին իշխանի անունը փորագրված է հապավված ձևով՝ ԹՄՆ: Մենք այն վերծանել ենք Թլ ույմլայն՝ նկատի ունենալով այդ անվան ավելի վաղ գործածությունը Գեղարքունյաց Գավառի իշխանների շարքում[6]:

Ներկայիս Գավառ քաղաքի «Դարի գլուխ» կոչվող պատմական գերեզմանոցի մի շարք արձանագրությունների շնորհիվ հնարավորություն ենք ստանում որոշակի պատկերացում կազմելու այդ հնամենի բնակավայրի XVI դարի իշխանավորների մասին: Այս միջնադարյան գերեզմանատան արևմտյան եզրում երկշարք ամփոփված են Միրաշենց տոհմի ննջեցյալների աճյունները: Դրանցից մեկի տապանաքարին երկու տողով արձանագրված է. «Այս է հանգիստ Ալստուա յծատուր աղին, որդի Միրանշին, տանուտէր Գաւառիս, յիշեցէք ի Քս, թվլինյ:ՋՀԳ: (1524)»[7]: Տասը տարի անց որպես Գավառի տանուտեր հիշատակվում է Շաղուբաթ աղան[8]:

Այն, որ Շաղուբաթ աղան Միրաշենց տոհմի ներկայացուցիչ է, տրամաբանորեն մակաբերվում է միևնույն պատվանդանին կանգնեցված երկու խաչքարերի հանգամանքից: Դրանցից մեկը բարեխոսված է Շահուլթանին, որը կինն էր վերոհիշյալ Աստվածատուր աղայի, իսկ մյուսը՝ «Շաղուպաթ աղին»[9]: Տաթևի վանքի Քոթուկում 1513 թ. Գեղարքունիքի մելիքների, տանուտերերի, իշխանավորների շարքում հիշատակվում է. «Ես Շահղուբաթս Գաւառնեցի որդի Աստուածատրին՝ թոռն Միրանշին»[10]:

Աստվածատուրի ու Շահուլթանի մյուս որդին Թուման աղան է. գերեզմանոցի Աստվածատուր աղայի հուշարձանի շարքում ժայռաբեկորե միևնույն պատվանդանին հառնող երկու մեծ ու գեղաքանդակ խաչքարերից հյուսիսայինը կանգնեցված է «ի փրկութեն Թումա աղին, որ է որդի Աստղուածայտուր աղին», իսկ հարավայինը՝ «փրկութեն հոգւոյն պարոն Հեղինին…բարէխաւս պարոն Գուլաղին…թվլ ինյ :ՋՂԷ: (1548)»[11]: Թումա աղայի խաչքարի առջև նրա տապանաքարն է, որի հարավային կողին սղումներով գրված անունները (Հախլնազարյ, Թումայ Կուլաղա - Ա. Մ.) հավանաբար Թումա աղայի որդիներն են, որոնք պատրաստել են խաչքարերն ու տապանաքարերը[12]: Թումա աղան ունեցել է հինգերորդ որդի ևս, ինչը փաստվում է հետևյալ արձանագրությամբ. «Այս է հանգիստ Փիրի բէկին, որդի Թուման աղային. :ՋՂ: (1541)»[13]:

Ահա, այս հինգ եղբայրներից մեկի որդին պետք է համարել Սաղ-

---

[6] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ IV, Գեղարքունիք, կազմեց Ս. Բարխուդարյանը, Եր., 1973, էջ 55: Այսուհետև՝ «Դիվան», պր. IV և էջը:

[7] Նույն տեղում, էջ 54:

[8] Տե՛ս նույն տեղը, էջ 56:

[9] Տե՛ս նույն տեղը, էջ 54-55:

[10] «Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ», գրեց Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի, միաբան Սուրբ Էջմիածնի, Վաղարշապատ, 1895, էջ 581:

[11] «Դիվան», պր. IV, էջ 55:

[12] Տե՛ս նույն տեղը:

[13] Նույն տեղում, էջ 56:

մոսավանքի նորահայտ արձանագրության նվիրատու իշխաններից առաջինին՝ պարոն Թումա Բ աղային, որը ոչ միայն կրել է իր պապի անունը, այլև, ինչպես երևում է նրա «պարոն», «աղա» կոչումներից, ժառանգել է նաև քաղաքի տանուտերության պաշտոնը: Հետագայում կտեսնենք, որ ամբողջ XVI դարում որպես Գավառ գյուղաքաղաքի գլխավոր իշխանավորներ հիշատակվում են Միրաշենց տոհմի անդամները: Ընծայատու երկրորդ իշխանին՝ Հովհաննեսին, որի անունը նույնպես փորագրված է կրճատումներով, պետք է կարծել գյուղաքաղաքի մյուս իշխանական տան՝ Տիլիճանենց ներկայացուցիչ. ազգատոհմում այդ անվան վիմագրական հիշատակությունների քանիցս հանդիպում ենք Գավառի կոթողային հուշարձաններին[14]: Ինչ վերաբերում է ընծայագրի երրորդ և չորրորդ իշխաններին՝ Դավթին և Դիլանչիին, ապա նրանց պետք է ենթադրել Գեղարքունիքի տանուտերական, մելիքական տների ազնվականներ: Մասնավորապես՝ Դիլանչի անվան, որ ծագում է թուրք. dilanči - «մուրացիկ»[15] բառից, հանդիպում ենք 1579 թ. ձեռագիր Ավետարանի[16] և 1426-1476 թթ. ընթացքում ընդօրինակված «Գիրք թղթոցի» հիշատակարաններում[17], ի դեմս Գեղարքունիքի պարոնաց պարոն, իշխանաց իշխան Մելիք Շահնազարի (1578-1608) յոթ որդիներից մեկի՝ Դիլանչի բեկի:

Նրանց պապ Մելիքբեկը, ըստ շահ Թահմազի (1524-1576) 1559 թ. հրովարտակի, Գեղարքունիքի 8 գյուղերի սեփականատեր էր[18]:

Հետաքրքրական է, որ Գավառի չորս իշխաններն իրենց հայրենի գյուղը «վախմ» են արել («վախմ» ծագում է արաբերեն فخم - «պատվի արժանացնել», «մեծարել» բառից), այսինքն՝ նվիրաբերել են Սաղմոսավանքի սուրբ Հակոբի Աջին: Խոսքը, անշուշտ, Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցի-գրատան մասին է, մի յուրահատուկ, ինքնատիպ, անսյուն հորինվածքով շինություն[19], որն իր մեջ միավորել է գրապահոցի և աղոթատան գործառույթները: Այդ է հուշում կառույցի ներսում խորանի և թաքստոցի առկայությունը[20]: Սաղմոսավանքի այդ եկեղեցին վիմագիր ու մատենագիր աղբյուրներից մեզ քաջածանոթ է որպես Ս. Աստվածածին կամ գրատուն: Նորահայտ արձանագրությունը ցարդ մեզ հայտնի միակ աղբյուրն է, որն այդ եկեղեցին կոչում է բոլորովին նոր երկանունով՝ Ս. Աստվածածին-Հակոբա կամ Հակոբի Աջի Ս. Աստվածածին: Վարդան Արևելցին, ով ի մոտո հրաշալի ճանաչել է այդ մենաստանը, քանի որ 1267 թ. այդտեղ բացել է

---

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 56-57:

[15] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Եր., 1944, էջ 68:

[16] Տե՛ս **Մ. Սմբատյանց**, նշվ. աշխ., էջ 890:

[17] Տե՛ս **Կարապետ եպիսկոպոս**, Դօփեանք եւ Մելիք Շահնազարեանք, Ս. Էջմիածին, 1914, էջ 137, 139, 190:

[18] Տե՛ս նույն տեղը, էջ 140:

[19] Տե՛ս **Ա. Յակոբսոն**, Սաղմոսավանք, Եր., 1984, էջ 9:

[20] Տե՛ս **Ստ. Մնացականյան**, Երևանը և նրա շրջակայքը, Եր., 1971, էջ 179:

բարձրագույն վարդապետական դպրոց, թվարկելով Սաղմոսավանքի սրբությունները, դրանց շարքում հիշատակում է «… եւ սուրբ Յակոբայ Մծբնայ հայրապետի աջն, եւ սուրբ Յակոբայ Տեառնեղբոր մատն…»[21]:

Սաղմոսավանքի ինը սրբություններից այդ երկուսն առնչվում են համաքրիստոնեական սրբեր Հակոբ Մծբնացուն (IV դ.), ով բարձրացավ Արարատ լեռը՝ Նոյյան տապանը որոնելու, և Երուսաղեմի առաջին եպիսկոպոս, Հիսուս Քրիստոսի «եղբայր» Հակոբ Տյառնեղբորը, ում մարմինը Հակոբոս առաքյալի գլխի հետ ամփոփված է հայոց պատրիարքության Սրբոց Հակոբյանց տաճարի հիմքում, կարծում ենք, պահվել են Ս. Աստվածածին եկեղեցի-գրատանը: Ուշագրավ է այն փաստը, որ արձանագրության նախավերջին՝ հինգերորդ տողում սուրբ ուխտի միաբանները կոչվում են «երկրպագաւոք սբ Աջին Յակոբայ»:

Գավառ կամ Գավառնի գյուղի նվիրատվությունը Ս. Աստվածածին-գրատանը կատարվել է «ի թվիյն ՌԷ (1558) հրամանաւ Տն Ստեփաննոս կլայթլոյղիյկլոսյի…»: Հիշատակվողը Ամենայն հայոց կաթողիկոս, մատենագիր, հայ ազգային-ազատագրական շարժման անխոնջ գործիչ Ստեփանոս Ե Սալմաստեցի (1545-1567) հայրապետն է, որը, մտահոգ XVI դ. սկզբից Հայաստանի տարածքում ընթացող պարսկա-թուրքական երկարատև պատերազմներից մեծապես տուժած երկրի ծանր վիճակով և թշվառացած հայ ժողովրդի ճակատագրով, հայրենիքի ազատագրության հույսը կապում էր Հռոմի պապի աջակցությամբ եվրոպական գերտերությունների հետ:

Գավառ գյուղաքաղաքի նվիրատվությունը Սաղմոսավանքին պետք է դիտարկել կաթողիկոս Ստեփանոս Ե Սալմաստեցու ձեռնարկներից մեկը՝ միտված պարսկա-թուրքական գրեթե չդադարող պատերազմների պատճառով տկարացած հայոց եկեղեցու դիրքերի վերականգնմանը, Մայր Աթոռի տնտեսական վիճակի բարելավմանը: Բացի այդ, ինչպես քիչ հետո կտեսնենք, Ստեփանոս Սալմաստեցին վերականգնել է Սաղմոսավանքի կալվածատիրական իրավունքը: Զարմանալի է, որ իրավական այդ վավերագրում չի ապահովված Սաղմոսավանքի առաջնորդի ներկայությունը: Կարծես նա չի էլ մասնակցել գործարքի կատարմանը: Փաստը բավականին տարօրինակ է, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ այդ ժամանակ Սաղմոսավանքն ունեցել է բավականին ձեռներեց վանահայր՝ ի դեմս Գրիգոր Բ վարդապետի, ով վախճանվել է 1561 թվականին[22]: Նրա փոխարեն ընծայագրում որպես ընդունող կողմ հանդես են գալիս «միաբանք սբ ուխտիս», որոնք «խոստացան ի տարին : Գ(3) օր պլայտլայրլայգլեյլ զքավս մեր» նվիրատու չորս իշխանների: Հնարավոր է՝ Սաղմոսավանքի առաջնորդ Գրիգոր Բ-ն այդ ընթացքում բացակայել է վանքից:

---

[21] «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», Բարիզ, 1960, էջ 26-27:

[22] Տե ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Ը, Եր., 2013, էջ 665-666:

Որպեսզի հաստատուն մնա նվիրատվության վճիռը, և ոչ ոք «ի մերոց կամ յօտարաց» չհանդգնի դուրս բերել Գավառ գյուղը Սաղմոսավանքի Ս. Աստվածածնի իրավասությունից, արձանագրվել է հայկական վիմագրերում մեծ տարածում գտած «երից ՍԲ ժողովոյն նզովեալ լինի եւ մեղացն պարտապան գտանի» անեծքի բանաձևը: Հայոց եկեղեցին միշտ էլ իր հավատարմությունն է հայտնել առաջին երեք տիեզերական ժողովների (325 թ.՝ Նիկիա, 381 թ.՝ Կոստանդնուպոլիս, 431 թ.՝ Եփեսոս) դավանաբանական բանաձևումներին և խստագույնս դատապարտել նրա հակառակորդներին:

Ուշագրավ է, որ նվիրատվական իրավական վճռում որպես վկաներ հանդես են գալիս միայն Գավառի քահանաները՝ Տեր Մատթեոսը և Տեր Կիրակոսը: Առաջինը Տիլիճանենց տոհմի ներկայացուցիչ է: Նա իր անվան հիշատակությամբ մեզ է կտակել արձանագիր երեք խաչքար:

Առաջինը թվագրվում է 1531-ով, որտեղ Մատթեոսն իրեն հիշատակում է առանց «Տեր» հարգական մակդիրի[23]:

Ակնբախ է, որ Մատթեոսը դեռևս չէր ձեռնադրվել քահանա: Երկրորդ և երրորդ խաչքարերը, որոնք, ինչպես և առաջինը, վեր են խոյանում մի մեծ ժայռաբեկորե պատվանդանի վրա, թվաբերվում են 1534-ով: Դրանցում Մատթեոսն արդեն հիշատակվում է որպես «Տէր» և «քահանա»[24]: Փաստորեն, նվիրատվության պահին Տեր Մատթեոսը շուրջ քառորդդարյա քահանայական հոգևոր ծառայության հովվական փորձառություն ունեցող հոգևորական էր:

Նորահայտ արձանագրության «զի հարք սոցա յառաջ տուեալ էին, սոքա կրկլիյն շնորհեցին սրդով» խոսքերից մակաբերվում է այն իրողությունը, որ ժամանակներ առաջ Գավառ բնակավայրը եղել է Սաղմոսավանքի վանքապատկան գյուղ, բայց անհայտ պատճառներով եկեղեցուց օտարվել է: Արդյո՞ք առաջին նվիրատվությունը չպետք է կապել Սաղմոսավանքի հովանավոր, Ամբերդի տիրակալ Քուրդ Ա Վաչուտյան իշխանաց իշխանի (1221-1270/2) գործունեության հետ, որն իր կյանքի մայրամուտին հրաժարվեց աշխարհից և քաշվեց Սևանա կղզու նշանավոր անապատ՝ միայնակյաց ճգնության[25]: Այդտեղ իշխանը միաժամանակ կարող էր մոտ գտնվել Գեղարքունիքի իր երկու տիրույթներին, որոնցից մեկի անունը մեզ հայտնի չէ: Հնարավոր է՝ XV դ. պատմության թատերաբեմից երբեմնի զորեղ Վաչուտյան իշխանական տան դուրս մղվելուց հետո Գավառն օտարված լինի Սաղմոսավանքից, մինչև որ Ամենայն հայոց կաթողիկոս Ստեփանոս Սալմաստեցին 1558 թ., ըստ նորահայտ արձանագրության, վերականգնել է այդ փառահեղ վանքի կալվածատիրական իրավունքը՝ գյուղը վերստին նրա իրավասությանը վերադարձնելով:

---

[23] Տե՛ս «Դիվան», պր. IV, էջ 56:
[24] Տե՛ս նույն տեղը, էջ 56-57:
[25] Տե՛ս **Տ. Պետրոսյանց**, Սաղմոսավանք, Եր., 2010, էջ 57:

Այս արձանագրությամբ միաժամանակ մենք ականատես ենք հայոց աշխարհի երկրամասերը միմյանց կապելու հետաքրքիր ձևի կիրառության:

Ճիշտ է, այդ ձևը փոխվեց Գավառի՝ իր պատմության ամենածանր շրջանի հաղթահարումից հետո, բայց գյուղաքաղաքը չօտարվեց Սաղմոսավանքից: Հայտնի է, որ 1580 թ. թուրքերը «խուժեցին Ղարաբաղ, գրավեցին Երևանն ու հասան Գեղարքունիք»[26]: Ֆարհադ փաշայի այդ արշավանքի արհավիրքներից զերծ չի մնացել նաև Գավառը: Բավականին խոսուն մի արձանագրություն կա Քիրամ նշանավոր քարագործ վարպետի կերտած մեծարվեստ, վերին աստիճանի գեղաքանդակ խաչքարի վրա, որ ժամանակին գտնվել է «Դարի գլոխ» գերեզմանատան հյուսիսարևմտյան մասում, ապա տեղափոխվել է Երևան և պահվում է Մատենադարանում:

Այդ բարձրարվեստ կոթողի երեսին ելունդագիր արձանագրված է. «⌈Սու⌉իբ նշանս բարէխաւս Հախնազար աղին. թվլինյ :Ռխէ: (1598), Ք⌈ի⌉րամ կազմող», իսկ թիկունքին ունի հետևյալ փորագրությունը. «Ի փոխում ղուզիլպաշին Դարվիժու ուսմանլիվին, որ Գաւառս աւիրեցաւ թվլիյն :ՌԼԱ (1582), Ես Հախնազարս եկի շինեցի, թվին :ՌԽ: (1591)…»[27]:

Պատմությունից գիտենք, որ «Շահ Թահմազի իշխանության վերջին շրջանում Իրանում նորից ծայր առան ֆեոդալական գժտությունները, որոնք նրա մահից հետո հանգեցրին Իրանի գահաժառանգության շուրջ բորբոքված արյունահեղ կռիվների: Թագի հավակնորդներից ոմանց ոչնչացնելուց և երկրի մարզերը իրար մեջ վերաբաժանելուց հետո, կըզըլբաշ երևելիները 1578 թ. գահ բարձրացրին Սեֆյան սուլթան Մուհամեդ Խուդաբանդային: Խուդաբանդայի թեկնածությանը նախապատվություն տրվեց ոչ թե ունեցած առավելությունների, այլ նրա ապիկարության նկատառումով: Սակայն դրանով դադար չառավ իշխանության համար մղվող պայքարը: Կըզըլբաշ ցեղերն ու պետերը նորից տրոհվեցին հակամարտ խմբավորումների… Իրանում ստեղծված խառնակ վիճակից օգտվեց Թուրքիան»[28]:

Ահա, օսմանցիների նախաձեռնած արշավանքի վիմագիր արձագանքն է Հախնազար աղայի 1598 թ. վերոհիշյալ արձանագրությունը: Այն կարևոր սկզբնաղբյուր է, որն ստույգ թվագրում է Գավառ գյուղաքաղաքի գրավումն ու ավերումը թուրքերի կողմից 1582 թ., և Հախնազար իշխանի ջանքերով նրա վերականգնումն ինը տարի անց՝ 1591 թվականին: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Հախնազար աղան Միրանշենց տանուտերական տոհմի ներկայացուցիչ է, թերևս հզորագույն մեկը. նրա անվանակից նախնու հիշատակություն կա,

---

[26] «Հայ ժողովրդի պատմություն», ԳԱ հրատ., հ. IV, Եր., 1972, էջ 86: Այսուհետև՝ ՀԺՊ, IV և էջը:

[27] «Դիվան», պր. IV, էջ 63:

[28] ՀԺՊ, IV, էջ 85-86:

ինչպես կանխավ ասել ենք, Թումա Ա աղայի տապանաքարին: Ճիշտ է, երկմտանքի մեջ գցող մի հանգամանք կա՝ կապված Մելիք Շահնազարի ավագագույն որդու հետ, որի անունը նույնպես Հախնազար էր: Սակայն, եթե Քիրամի 1598 թ. խաչքարին նա հիշատակվեր, ապա կկոչվեր ոչ թե «Հախնազար աղա», այլ՝ «Հախնազար բէկ»: Հետևապես՝ հիշատակվողը Միրաշենց տոհմակից Հախնազար Բ-ն է:

Կարծում ենք՝ վերականգնումից հետո Գավառը փոխել է իր իրավաբանական կարգավիճակը՝ վանքապատկան գյուղից վերածվելով վանքահպատակի՝ թեմին հարկատու բնակավայրի՝ վիճակի[29], ինչը մակաբերում ենք Գրիգոր Դարանաղցու վերը մեջբերված վկայությունից:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ XIII դ. Գավառ գյուղաքաղաքը եղել է Արարատյան երկրի Սաղմոսավանք հռչակավոր մենաստանի վանքապատկան գյուղ, այդ իսկ պատճառով նրա անունը չկա Տաթևի վանքին հարկատու Սյունյաց Գեղարքունի գավառի շուրջ հինգ տասնյակ բնակավայրերի շարքում[30], XV դ. կեսին այն օտարվել է այդ վանքից, 1558 թ. վերստին վերադարձվել է եկեղեցու իրավասությանը և XVI դ. վերջից մինչև XVIII դ. այլ կարգավիճակով, այսինքն՝ որպես վանքահպատակ բնակավայր, շարունակել մնալ նրա անբաժան մասը:

Բանալի բառեր – *քաղաք, պատմություն, նորահայտ, էջ, վանք, եկեղեցի, պատ, արձանագրություն, սեփականություն, վանքապատկան, գյուղ*

АШОТ МАНУЧАРЯН – ***Новонайденная лапидарная страница истории города Гавара.*** – Автор статьи расшифровал обширную надпись, датируемую 1558 г. и высеченную высоко на южной стене церкви св. Богородицы, входящей в монастырский комплекс Сагмосаванк – известнейшую обитель средневековой Армении. Из надписи выясняется, что Гавар – город в области Гехаркуник Сюникской провинции – в средневековье считался поселением, принадлежавшим на правах собственности монастырю Сагмосаванк, расположенному в провинции Арагацотн.

Ключевые слова: *город, история, новонайденная страница, монастырь, надпись, собственноть, поселение*

ASHOT MANUCHARYAN – ***Newly Found Stone Page of the History of Town Gavar***. – Due to the inscription from 1558 on the southern wall of St. Astvatsatsin / St. Vergin church of Saghmosavank, that has been deciphered by us, the town of Gavar in Gegharkuonik region, Syunik Province used to be the possession of Saghmosavank in Aragatsotn in the Middle Ages.

Key Words: *town, history, newly found, page, monastery, church, wall, inscription, possession, belonging to the monastery, village*

---

[29] «Վիճակները» վանքի սեփական կալվածքները չէին, այլ նրան հարկատու գյուղերն ու ագարակները (տե՛ս **Ս. Հակոբյան**, Հայ գյուղացիության պատմություն (զարգացած ֆեոդալիզմի դարաշրջան), հ. 2, Եր., 1964, էջ 163):

[30] Տե՛ս «Պատմութիւն նահագին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 513-514: